Հավելված N 16
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) կենտրոնական մարմնի ֆինանսատնտեսական բաժինը (այսուհետ՝ Բաժին) Ծառայության աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Բաժինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ԲԱԺՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Բաժնի նպատակներն են՝

1) Ծառայության ֆինանսատնտեսական գործունեության անհրաժեշտ աշխատանքների իրականացումը.

2) Ծառայության բնականոն տնտեսական գործունեության ապահովումը.

3) Բյուջեի կատարման ապահովումը.

4) ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործումը.

5) ֆինանսական հաշվետվությունների հավաստիության ապահովումը:

5. Բաժնի խնդիրներն են՝

1) ապահովել Ծառայության ֆինանսահաշվապահական հաշվետվությունների վարման աշխատանքները.

2) ապահովել Ծառայության բյուջետային գործընթացի պլանավորումը.

3) ապահովել Ծառայության գնումների գործընթացը.

4) իրականացնել աշխատակազմի կենտրոնական մարմնի, տարածքային ստորաբաժանումների հաշվապահական հաշվառման վարման, ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման և վերլուծության աշխատանքները.

5) ապահովել նյութատեխնիկական մատակարարման և շահագործման աշխատանքները.

6) իրականացնել Ծառայությանն ամրացված գույքի հաշվառման, բաշխման և դուրս գրման աշխատանքները:

3. ԲԱԺՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

6. Բաժնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտերի կազմման աշխատանքների իրականացումը.

2) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի ծախսերի տարեկան նախահաշիվների կազմումը և դրանց մուտքագրումը clienttreasury համակարգ.

3) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի գծով պայմանագրերի մուտքագրումը clienttreasury համակարգ.

4) Հայաստանի Հանրապետության տվյալ տարվա պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի գծով կնքված պայմանագրերի շրջանակներում ֆինանսական հաշվետվությունների կատարողականների կազմումը և ներկայացումը Արդարադատության նախարարություն.

5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի և արտաբյուջետային միջոցների հաշվին Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի գծով բյուջետային և միջգանձապետական հայտերի ներկայացումը.

6) ֆինանսական բնույթի նորմատիվ իրավական և իրավական այլ ակտերի նախագծերի մշակումը և ներկայացումը.

7) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի գծով ներքին հոդվածային, միջծրագրային վերաբաշխման փաստաթղթերի փաթեթի կազմման աշխատանքների իրականացումը.

8) Ծառայության համակարգի կողմից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե մուտքագրվող եկամուտների վերաբերյալ, միջնաժամկետ ծախսային ծրագրերով և բյուջետային տարիների կտրվածքով կանխատեսումների և դրանց հավաքագրման

վերաբերյալ հաշվետվությունների կազմումը և ներկայացումը Արդարադատության նախարարություն.

9) Ծառայության հաշվապահական հաշվառման գործառնությունների վարումը և ամփոփումը, Բաժնի գործունեությունից բխող ֆինանսական ու տնտեսական բնույթի հաշվարկների կատարումը և օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում պահանջվող տեղեկատվության հրապարակումը և հանրայնացումը.

10) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված և Ծառայության միջոցով իրականացվող ծրագրերի գծով հաշվետվությունների կազմումը և ներկայացումը Արդարադատության նախարարություն.

11) Ծառայության ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփ եռամսյակային հաշվետվության կազմումը և ներկայացումը Արդարադատության նախարարություն.

12) Ծառայության գնման պլանի կազմման աշխատանքների իրականացումը.

13) Ծառայության կարիքների համար իրականացվող գնման ընթացակարգերի և դրանց առնչվող փաստաթղթերի համապատասխանության ապահովումը գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին.

14) գնման ընթացակարգի արձանագրությունների և պայմանագրերի կազմման և Ծառայության գլխավոր քարտուղարի հաստատմանը ներկայացնելու աշխատանքների կազմակերպումը.

15) Ծառայությանն առնչվող՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված՝ հրապարակման ենթակա տեղեկատվության հրապարակումը.

16) Ծառայության աշխատողների աշխատավարձերի, ժամանակավոր անաշխատունակության նպաստների, արձակուրդային այլ վճարների համար անհրաժեշտ հաշվարկների կատարումը.

17) Ծառայության աշխատողների ծառայողական գործուղումների հաշվարկման և հաշվետվությունների ընդունման աշխատանքների իրականացումը.

18) սոցիալական փաթեթի շրջանակներում հայտերի ընդունման, փոխանցման և համապատասխան հաշվետվությունների կազմման աշխատանքների իրականացումը.

19) եկամտային հարկի հաշվետվության կազմման և ներկայացման աշխատանքների իրականացումը.

20) Ծառայության աշխատաժամանակի տեղեկագրերի կազմման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը.

21) Ծառայության ապրանքանյութական արժեքների՝ այդ թվում հիմնական միջոցների և նյութերի հաշվառման, ընթացիկ ու ոչ ընթացիկ ակտիվների ու պարտավորությունների գույքագրման աշխատանքների իրականացումը.

22) Ծառայության ապրանքանյութական արժեքների ձեռքբերման ու ստացման, պահեստավորման, պահպանման, արդյունավետ և նպատակային բաշխման ու շարժին վերաբերող, ինչպես նաև հիմնական միջոցների և այլ նյութական արժեքների օտարման (դուրս գրման) աշխատանքների իրականացումը.

23) Ծառայությանը պատկանող, ամրակցված կամ տիրապետմանը հանձնված (ամրակցված) գույքի պահպանման, տեխնիկական սպասարկման ու նորոգման, ապահովագրության, անվտանգության կանոնների ու սանիտարական մաքրության պայմանների պահպանման աշխատանքների իրականացումը, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողությունը ու վերահսկողությունը.

24) Ծառայության ընթացիկ և կապիտալ շինարարական աշխատանքների իրականացման գործընթացի կազմակերպումը և վերահսկումը:

25) Բաժնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ԲԱԺՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

7. Բաժնի գործունեության ընդհանուր համակարգումը իրականացնում է Գլխավոր քարտուղարը:

8. Բաժնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Բաժնի պետը:

9. Բաժնի պետն անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:

10. Բաժնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Ծառայության պետը և Գլխավոր քարտուղարը:

5. ԲԱԺՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

11. Բաժնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ:

(20-րդ և 21-րդ ենթակետերը շարադրվել են նոր խմբագրությամբ, ավելացվել են 22-րդ, 23-րդ, 24-րդ և 25-րդ ենթակետերը՝ հիմք ՀՀ արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության պետի 2025 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ 294-Լ հրաման)